ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«12» փետրվարի 201 թ. N 31

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728-Ն հրամանագրի 1.6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի պահանջներով

ո ր ո շ ու մ եմ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության տարահանման պլանը՝ (համաձայն հավելվածի):

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի նախագահին.

1)Յուրաքանչյուր տարի կազմակերպել մարզի բնակչության տարահանման պլանի ճշգրտում՝ հունվարի 1-ի դրությամբ:

2) Մշտական հսկողություն իրականացնել մարզում ստեղծված բոլոր տարահանման մարմիններում անհրաժեշտ փաստաթղթերի առկայության և անձնակազմերի համալրվածության ուղղությամբ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ